ՍԱՂՄՈՍ 36

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Մարդու ամբարշ-տությունը և Աստծո բարեգթությունը	Մարդու չարու-թյունը և Աստծո պաշտպանությունը	Խառը տեսակի Սաղմոս	Մարդկային չարությունը	Մեղավորների ապա-կանությունը և Աստծո բարեգոր-ծությունը
<u>MT ներածություն</u> «Գլխավոր երաժշտին՝ Դավթի սաղմոսը»				
36:1-4	36:1-4	36:1-4	36:1-4	36:1
				36:2-3ա
			Աստծո բարությունը	36:3բ-6ա
36:5-9	36:5-9	36:5-6	36:5-6	
		36:7-9	36:7-9	
				36:6գ-7
				36:8-9
36:10-12	36:10-12	36:10-12	36:10-12	36:10-11
				36:12

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը նկարագրում է անաստված անձին Սաղմ. 36:1-4-ում և ապա հավատարիմ հետևորդին՝ Սաղմ. 36:7-9-ում:

Բ. ՅԱՀՎԵՆ նկարագրվում է Սաղմ. 36:5-6-ում չորս հզոր բնութագրական ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՎ:
1. գթասրտություն
2. հավատարմություն
3. արդարություն
4. դատաստաններ, արդարություն
   Սրանք նկարագրում են ՅԱՀՎԵԻՆ և Նրա ուխտը: Ահա թե ինչպես է Նա ուզում, որ Իր խոսքերը գործեն:

Գ. Սաղմոս 36:10-12 մատուցում է եզրափակիչ աղոթքներ ուղղված ՅԱՀՎԵԻՆ, որպեսզի օգնի պաշտպանելու աստվածավախին անաստվածների ազդեցությունից: Վատ ազդեցությունը՝
1. անկում ապրած աշխարհի (տես՝ Եփես. 2:1)
2. անկում ապրած մշակույթի
3. անկում ապրած ծանոթների (տես՝ 1 Կորնթ. 15:33)
4. անկում ապրած ինքնության (տես՝ Եփես. 2:3)
5. Եփես. 7:2, 4:2, 6:10-18 նաև ավելացնում է Սատանային (այսինքն՝ տես <u>ՀԱՅՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՏԱՆԱ</u>), որը հաճախ ուժեղ է, համառ, և համոզող: ՅԱՀՎԵԻ բնավորությունը, խոսքը և միջամտությունը մեր միակ հույսն է:

Դ. Այս Սաղմոսում երկու յուրահատուկ բառերի կիրառություն են գտնվում՝
1. չարը անձնավորված (այսինքն՝ «անօրենությունը խոսում է»), Սաղմ. 36:1
2. «տունը» վերաբերում է ամբողջ ստեղծագործությանը կամ վախճանաբանական միջավայրին: Տես՝ Սաղմոս 36:8-9 գրառումը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 36:1-4
[1]Ամբարշտի անօրենությունն իմ սրտին ասում է.
«Աստծո վախը չկա նրա աչքերի առջև»:
[2]Քանի որ ինքն իրեն է շողոքորթում իր իսկ աչքում՝
Մինչև իր հանցանքի ատելի լինելն ի հայտ գա:
[3]Նրա բերանի խոսքերը հանցանք են ու խաբեություն.
Դադարել է իմաստուն լինելուց ու բարիք գործելուց:
[4]Իր անկողնում խառնակություն է ծրագրում
Ու կանգնում է այնպիսի մի ճանապարհի վրա,
Որ լավ չէ. նա չարից չի զզվում:

36:1-4 Այս համարները նկարագրում են անաստված մարդկանց (BDB 957):
1. անօրենությունը խոսում է ամբարշտի (LXX, MT «իմ») սրտի ներսում (BDB 833 սա անվանում է «անձնավորված որպես չար ոգի»): Անօրենություն, ապստամբություն բառի ԲԱՅԸ կիրառվում է Սաղմ. 37:38, 51:13, Եսայի 43:27, 59:13, 66:24, Երեմ. 2:8,29, 3:13, 33:8-ում, որտեղ նկատի ունի ուխտի ժողովրդի մեջ անօրենությանը՝ ապստամբությանը: Սաղմոսերգուն ապրում է պիղծ շուրթեր ունեցող մարդկանց մեջ (տես՝ Ես. 6:5,9-10):
2. Նրա աչքերի առջև Աստծո վախը չկա (այսինքն՝ սարսափ, BDB 808): ՅԱՀՎԵԻ վախի մասին զգուշացվում է Սաղմ. 34:9, 55:19դ: Այս համարը հանդիսանում է Հռոմ. 3:18-ում մեջբերված ՀԿ-յան տեքստերի ցանկի մեջ ամփոփիչ տեքստ, որոնք պնդում են ամբողջ մարդկության համընդհանուր մեղավորության մասին:

3. Կա՛մ «անձնավորված անօրենությունը» կա՛մ էլ անաստված անձն ինքը ստում է («շողոքորթել», BDB 325, KB 322, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ինքն իրեն իր իսկ հանցանքի մասին:
4. Նրա բերանի խոսքերը (որոնք արտացոլում են, թե ով է ինքը)՝
   ա. հանցանք են (BDB 19)
   բ. խաբեություն են (BDB 941)
5. Նա դադարել է՝
   ա. իմաստուն լինելուց (BDB 968, KB 1328, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ)
   բ. բարիք գործելուց (BDB 405, KB 408, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ)
6. Նրա ծրագրերը իր անկողնում չարություն են (Սաղմ. 36:4-ի բոլոր ԲԱՅԵՐԸ ԱՆԿԱՏԱՐ են, ցույց են տալիս շարունակվող գործողություն), տես՝ Առակ. 4:16, Միքիա 2:1
7. կանգնում է այնպիսի ճանապարհում, որ լավ չէ: Հիշեք, որ կյանքը բնութագրվում է որպես ճանապարհ, ուղի, ճամփա: Մեզնից յուրաքանչյուրը պետք է ընտրի, թե որ ճանապարհով է գնալու, տես՝ 2 Օր. 30:15, Մատթ. 7:13-14
8. Նա չի արհամարհում չարը:

Անգամ ուխտի ժողովուրդը փորձվում, ստուգվում է (այսինքն՝ անձնավորված ապստամբություն), սակայն նրանք դեռևս պատասխանատու են իրենց որոշումների և դրանց հետևանքների համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 36:5-9
5Քո ողորմությունը, ո՛վ ՏԵՐ, երկինքներում է,
Քո հավատարմությունը մինչև ամպերն է հասնում:
6Քո արդարությունը մեծ լեռների պես է,
Դատաստաններդ՝ խոր անդունդի.
Մարդկանց ու անասուններին Դու ես պահպանում, ո՛վ ՏԵՐ:
7Ի՞նչ գերազանց է Քո գթասիրությունը, ո՛վ Աստված.
Դրա համար մարդկանց որդիները Քո թևերի հովանուն են ապավինում:
8Նրանք առատորեն հագենալու են Քո տան լիությունից.
Քո բարեհաճությունների գետից ես խմեցնելու նրանց:
9Քանի որ կյանքի աղբյուրը Քո մոտ է.
Քո լույսով ենք լույս տեսնելու:

36:5-9 Այս պարբերությունը նկարագրում է ՅԱՀՎԵԻ բնավորությունը և գործողությունները Իր ժողովրդի համար: Ինչպես որ ապստամբները ընտրում են և ապրում իրենց որոշումների լույսի ներքո, այնպես էլ հավատարիմ հետևորդները պետք է շարունակեն արձագանքել ՅԱՀՎԵԻ սիրույն:

1. ՅԱՀՎԵՆ նկարագրվում է որպես /Սաղմ. 36:5-6/՝
   ա. գթասիրություն (BDB 338, այսինքն՝ ուխտի հավատարմություն, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*HESED*)</u>)
   բ. հավատարմություն (BDB 53, տես <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ՈՒՄ</u>)
   գ. արդարություն (BDB 842, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ</u>)
   դ. դատաստաններ (BDB 1048, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐ, ԴԱՏԱՍՏԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ</u>)

   Սրանք ՅԱՀՎԵԻ չորս հզոր, պարբերաբար կրկնվող առանձնահատկություններն են: Դրանք բնութագրում են Նրա գործելակերպը մարդկանց հետ: Այս հատկանիշների լույսի ներքո մարդիկ և այս մոլորակի վրա առկա ամբողջ կյանքը պահպանվում է (BDB 446, KB 448, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐՆԵՐ): *Էլոհիմը* ստեղծեց և պահպանում է այս մոլորակը, իր մարդկանց, կենդանիների և բուսականության կյանքը (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>):
2. Հավատարիմ հետևորդները
   ա. ապավինում են Քո թևերի հովանուն (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</u>)

բ. նրանք առատորեն հագենալու են Քո տան լիությունից (տես՝ Համատեքստային Հասկացություններ, Դ, կամ Սաղմ. 36:8-ի գրառումը):
գ. Քո տունը լինելու է նրանց համար որպես՝
1) կյանքի աղբյուր, տես՝ Երեմ. 2:13, 17:13
2) լույս (ճշմարտություն, առողջություն, ուրախություն, տես՝ Սաղմ. 18:28, 27:1)

36:7 «Ո՛վ ՏԵՐ: Եվ մարդկանց որդիները» Հնարավոր է, որ «Աստված» (*Էլոհիմ*) այստեղ նկատի ունի «առաջնորդներին», քանի որ կարծես թե զուգահեռներ են տարվում «մարդ և կենդանիների» միջև (այսինքն՝ երկու խմբերի) Սաղմ. 36:6գ-ում: Եթե այդպես է, ապա երկու մարդկային խմբերի, որոնք այստեղ նկատի է առնված, պետք է որ լինեն՝

1. առաջնորդներ (այսինքն՝ դատավորները՝ Ելից 21:6, Սաղմ. 82:6 կամ Սաղմ. 29:1, 58:1-ի առաջնորդները)
2. նրանք, ովքեր առաջնորդվում էին

NEB, REB, TEV և AB ծանոթագրությունը ունեն՝ «Աստվածներ և մարդ»:

36:8 «Քո տունը» Այս համատեքստում այն չի վերաբերում տաճարին, այլ վերաստեղծված Եդեմին (այսինքն՝ «բարեհաճություն», BDB 726, Սաղմ.36:8բ) կամ վախճանաբանական միջավայրը (այսինքն՝ նոր դարաշրջանը, տես՝ Սաղմ.46:4, Եզեկ.47:1-12, Հովել 3:18, Հայտն.22:1-2):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 36:10-12
10Շարունակի՛ր Քո գթությունը Քեզ ճանաչողների հանդեպ
Ու Քո արդարությունը՝ սրտով ուղիղների վրա:
11Ամբարտավանի ոտքը թող չգա ինձ վրա,
Ու չարերի ձեռքն ինձ չտատանի:
12Այնտեղ ընկան անօրենություն գործողները.
Գետնին տապալվեցին ու չեն կարողանալու վեր բարձրանալ:

36:10-12 Այս ամփոփիչ պարբերությունը աղոթք է ՅԱՀՎԵԻՆ սաղմոսերգուի շուրթերից՝ հավատարիմ հետևորդների համար (այսինքն՝ «Քեզ ճանաչողներին», տես՝ , տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱՉԵԼ</u>)

1. շարունակիր – BDB 604, KB 645, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
   ա. Քո գթությունը
   բ. Քո արդարությունը
2. թույլ մի՛ տուր՝
   ա. ամբարտավանի ոտքը գա ինձ վրա – BDB 97, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅ-ՑԱԿԱՆ իմաստով
   բ. ամբարշտի ձեռքը ինձ տատանի – BDB 626, KB 678, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. Թող ամբարիշտը՝
   ա. ընկնի – BDB 656, KB 709, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
   բ. տապալվի – BDB 190, KB 218, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
   գ. չկարողանա վեր բարձրանալ – BDB 407, KB 410, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (բոլոր երեք ԲԱՅԵՐԸ կարող են վերաբերել մահվանը կամ *Շեոլ* իջնելուն)

Ուշադրություն դարձրե՛ք հավատքի հետևանքներին (Սաղմ. 36:7-8) և չարության հետևանքներին (Սաղմ. 36:11-12): Որոշումները՝ ընտրությունները ունեն հետևանքներ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա <u>ուղեցույց</u> հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է

քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Համեմատե՛ք ձեր ունեցած բոլոր թարգմանությունները և նշեք Սաղմ. 36:1-ի թարգմանության տարբեր կերպերը:
2. Արտահայտեք ձեր իսկ բառերով Սաղմ. 36:1-4-ի էությունը մեկ հայտարարող նախադասությամբ:
3. Սաղմ. 36:5,6-ում առկա չորս կարևոր տերմինները ի՞նչ են ասում ՀԿ-ում պայմանական և անպայմանական՝ անվերապահ, ուխտի գաղափարի շուրջ:
4. Կարո՞ղ է արդյոք *Էլոհիմ* տերմինը Սաղմ. 36:7-ում նկատի ունենալ Իսրայելի առաջնորդներին կամ դատավորներին, ինչպես նաև Իսրայելի Աստծուն: Ինչո՞ւ:
5. Ինչո՞ւ է «Քո թևերի հովանու տակ» խոսքը նկատի ունենում Աստխուն որպես իգական սեռ: Ո՞րն է նմանատիպ հայտարարությունների ակնարկը:
6. Արդյո՞ք ձեզ ոչ հոգևոր է թվում Դավթի այն աղոթքները, երբ նա աղոթում է իր թշնամիների կործանման համար: